



8. ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿՈՐՉԻ

Մարդ ու կնիկ են լինում. ունենում են մի շատ սիրուն աղջիկ: Մի քանի ժամանակից հետո սրա կնիկը մեռավ. նա մի ուրիշ կնիկ առավ, որ նույնպես որբևայրի էր՝ մարդը մեռել էր, սա ևս իր հետ մի աղջիկ բերեց, խորթ մայրը շատ վատ աչքով էր նայում նորա առաջվա կնկանից մնացած աղջկա վերա. նա միշտ քաղցած էր մնում, շատ էր բանացնում, իսկ իր հարազատ աղջկանը շատ լավ էր պահում: խորթ որդուն ամեն օր կովը տալիս էր, որ տանի արածացնի ու մի կտոր էլ կուտ հաց էր տալիս, ասելով.

— Տա՛ր, կովը արածացրու, էս մի կուտ հացն էլ քեզ. համ դու կե՛ր, քո կովին ուտացրու, դնացող-էկողին էլ հաց տուր ու երեկոյան սաղ հետ բեր հացը:

Խեղճ աղջիկը լաց լինելով տանում էր կովը արածացնելու ու էլի հացը ետ էր բերում՝ ինքը քաղցած մնալով: Իսկ երբ ուտում էր՝ բարկանում էր նրա վրա, շէր էլ ուտում, հացը սաղ էր բերում՝ էլի բարկանում էր. մի խոսքով ամեն անգամ նա գտնում էր որևէ պատճառ՝ նորա վրա բարկանալու, կամ ծեծելու:

Մի անգամ էլ, երբ այսպես լաց էր լինում, հարցրեց կովը, թե ինչո՞ւ է լաց լինում, նա ասաց, որ յուր խորթ մայրը նրան ծեծում է միշտ, ինքն էլ մի անտեր աղջիկ է. ամեն օր քաղցած են պահում:

Կովը ասեց.— Լա՛վ, մի՛ լաց լինի, ես քեզ ամեն օր կկերակրեմ, իմ երկու պողերի մեջ՝ մեկում մեղր կա, մյուսում կարագ:

ամեն օր կհանես կուտես: Երեք օրից հետո ինձ պիտի մորթեն, դուն իմ մսից չես ուտիլ, կժողովես իմ բոլոր ոսկորները ու կտանես մի անկյուն կթաղես:

Այսպես նա կովի պոզերից կերակրվում էր ու մոր տված կուտ հացը վերադարձնում էր տուն: Մի անգամ էլ գնաց կովը արածացնելու. նա ամեն անգամ գնալիս տանում էր թեշին ու բուրդ մանում, այս անգամ էլ նա թեշին վեր կալավ ու գնաց կովը արածացնելու, նա կանգնեց մի տան կտրանը ու մանում էր թեշին. նա մոտ էր կանգնած տան երդկին: Մանելիս հանկարծ թեշին ընկավ երդկի միջով՝ տան մեջը. նա շգիտեք թե ինչ անի, սկսեց լաց լինել, թե մայրը կծեծի, եթե առանց թեշու գնաց տուն: Երդկից ներքև մտիկ արեց, տեսավ մի պառավ նստած է, նա խնդրեց իր թեշին: Նա ասաց, որ ինքը մի պառավ կնիկ է, աչքերը չեն տեսնում, ոտներով չի կարում ման գալ, թող ինքը դնում գա ու վերցնի: Նա վախվրխելով դնում ներս մտավ, որ վերցնի թեշին: Երբ մտավ տուն, պառավը խնդրեց, որ գա իր գլուխը քութուի. նա գնաց քութուից:

Պառավը ասեց.— Դու որ ինձ լավություն արեցիր, ես էլ ուզում եմ քեզ լավություն անել, էստեղից դուրս կերթաս. առաջ իրեք աղբյուր կերևա՝ մինը սիպտակ, մինը սև, մինը դեղին: Միպտակ աղբյուրը կթողես, սևն էլ կթողնիս ու դեղին աղբյուրի մեջ կըկոխես գլուխդ ու մազերդ ոսկի կդառնա, նույնպես ատամներդ, եթե այն ջրից խմես:

Աղջիկը շնորհակալություն հայտնեց նորան ու գնաց, ինչպես ասել էր, արեց. մաղբըրը ու ատամները ոսկի դարձան: Նա գլուխը թաշկինակով կապեց՝ վախենալով, որ մայրը կծեծի իրան: Կովը քշեց ու տուն դարձավ: Մայրը էլի մի սլատճառ գտավ ու սկսեց նորան ծեծել: Երեկոյան մթնեց թե չէ նա նկատեց, որ սենյակի մեջ մի սաստիկ լույս տարածվեց, բայց ճրագը վառած չէր: Նա դե՛ս, դե՛ն մտիկ արեց, բայց չկարողացավ իմանալ թե ինչից է վերջապես նկատեց, որ իր խորթ աղջկա գլխից է այդ լույսը: Նա գլուխը աղլուխով կապել էր, բայց թաշկինակը իր վրա մի փոքրիկ ծակ ունեւր ու այնտեղից լույսը ելնում էր: Նա հրամայեց բաց անել գլուխը, և երբ տեսավ նրա ոսկի մազերը, որ լույս էին տալիս մութ սենյակում, մնաց զարմացած, սկսեց նրան ծեծել. նա պատմեց բոլորը, թե ինչպես եղավ, որ նրա մազերը ոսկի դարձան:

Ինքն իրան միտք արեց, և թե սա գնաց ու մազերը ոսկի դա-
ռան, ինչու իմ աղջիկը չի կարող գնալ:

Մյուս օրը նա իր հարազատ աղջկանը ուղարկեց. կովը տվեց,
որ տանի արածացնի: Խոսք չկա, նորա հմար լավ-լավ կերակուր-
ներ եփեց ճանապարհի համար, գլուխը լվաց, լավ շորեր հագցրեց:
Նա գնաց ինչպես առաջվա աղջիկը, նա էլ կանգնեց էս պառավի
կտրան վրա ու դիտմամբ թե շին վայր գցեց ձեռից նորա երգկով
ու փոխանակ խնդրելու, սկսեց հայհոյել, որ բերի իր թե շին տա:
Նա ինչպես առաջվա աղջկան, նույնպես և սորան ասեց, որ ինքը
ծերության պատճառով չի կարող տալ նորա թե շին. թող ինքը գա
ու վերցնի: Նա գնաց թե շին վերցնելու, պառավը խնդրեց որ իր
դուխը բութութի. նա գնաց բութութելու և երբ տեսավ, որ նրա
դուխը կեղտոտ է՝ չբութութեց, այլ մինչև անդամ լավ հայհոյեց:

Պառավը ասեց.— Կերթաս այստեղից առջևդ իրեք աղբյուր
կերևա, մինը սիպտակ, մինը սև, մինը դեղին, սիպտակի տակ շես
պահի գլուխդ, այլ սեի, ու մազերդ ոսկի կդառնա:

Նա ուրախ-ուրախ գնաց ու գլուխը կտխեց սև աղբյուրի մեջ.
Վակատին մի ևրկայն միս դուրս եկավ: Նա մնաց զարմացած ու
դուխը ծածկեց, որ այն շերևա ու շտապեց տուն գնալ, ճանապար-
հին կրկնապատիկ հայհոյելով պառավին:

Մորը ցույց տվեց իր ճակատին դուրս եկած բանը:

Մայրը խեղճ խորթ աղջկանը ծեծեց, իբր թե մեղավորը նա է,
բայց ոչինչ չդառավ սորանով, դանակով կտրեց, բայց ավելի եր-
կայն դուրս եկավ նրա փոխանակ: Չարաները ի՛նչ, պետք է այն-
պես թողնեին: Երկու օր սրանից անց կացավ. նրանք մորթեցին
իրանց կովը, մատաղ արին: Սրա մսից ևս իսկի չկերավ, այլ նրանց
կերածից մնացած ոսկորները ժողովեց ու տարավ մի անկյունում,
հեռու տեղ հորեց: Երբ խորթ մայրը հարցրեց, թե ինչո՞ւ չի ուտում,
նա ասաց, որ ինքը կերել է, չի ուզում:

Մի քանի օր անց կացավ սրանից հետո, մայրը ու իր աղջիկը
գնացին եկեղեցի, որովհետև այդ օրը շատ նշանավոր օր էր, սաղ
քաղաքը համարյա եկեղեցու մեջ էին, միայն այս խեղճ աղջկան
չէին տարել: Երբ մեր ու աղջիկ եկեղեցի գնացին, նա գնաց փորեց
յուր հորած ոսկորները, տեսնի, թե ինչ են եղել, ու երբ փորեց՝
տեսավ նրա տակ մի մեծ գոմ կա, ուր մի հրեղեն ձի է կանգնած.
Նա ծվծվացրեց թե չէ, իսկույն սա դուրս եկավ ու ասեց նրան.

— Ինչ տեսակ շորեր ուզում ես, ունե՞մ՝ կարող ես հագնել ու տ'ըր ուզում ես՝ կտանեմ:

Այս հրեղեն ձին ոտից մինչև գլուխ ոսկով էր պատած: Նա յվացվեց, մաքրվեց, լավ-լավ շորեր հագավ, ոսկե բաշմակներ հագավ ու նստեց այդ ձիու վրա ու գնաց եկեղեցի:

Ձին չոքեց և նա վայր եկավ ձիուց, մոմ առավ, վառեց, ժամում աղոթք արեց:

Եկեղեցում գտնված բոլոր մարգիկը նրան էին նայում ու իրար հարցնում, թե սա ում աղջիկն է, բայց ոչ ոք չէր ճանաչում: Եկեղեցում մի ժամ մնաց ու գուրս եկավ, ձին էլի չոքեց, աղջիկը նըստեց ու քշեց. սաղ ժողովուրդը մնաց նրա ետևից մտիկ անելով: Նա այստեղից երր գուրս եկավ ձին էլետ առաջվա տեղում չկայեց, այլ այնպես շորերը հագած, նստած ձիու վրա, գնաց ծովի դրաղը ման գալու, ու իր ոտից բաշմակի մի հատը ընկավ ծովի մեջ, նա տակը չգնաց այլ երեսին տմբտմբում էր: Նա շատ ափսոսեց սրա վրա, բայց ինչ պիտի աներ. չէր կարող հանել ծովից, վախենում էր չըլնի թե ձին խեղդվի. նա թողեց ծովի երեսին այն ու եկավ շտապով, ձին յուր գոմում կայեց. հանվեց ու յուր առաջվա հին շորերը հագավ, սպասում էր խորթ մոր գալուն:

Նա եկավ յուր աղջկա հետ ու սկսեցին ծիծաղել նրա վրա, թե.

— Ա՛յ այնպիսի աղջիկ պետք է լինել, ոչ թե քեզ պես կեղտոտ: Նա էլ կարծես քեզ պես լիներ, նրա մաղերը քոնի պես էին:

Նա իր մեջ ծածուկ ծիծաղում էր, բայց վախենում էր ասի:

Հիմա գնանք տեսնենք, թե ինչ եղավ նրա գցած բաշմակի:

Թաքավորի ծառան երեկոյան ձիաները բերեց ծովի ափը ջրելու: Միայն նրանք ջուր չխմեցին, ջրի մեջ ինչ որ լույս էր երևում: Այս լույսից նրանք վախենում, հուշտ էին լինում: Ձիապանը լավ մտիկ արեց ու տեսավ, որ ծովի վրա մի ոսկե բաշմակ, նա իսկույն շորերը հանեց, մտավ, հանեց այն ու ուրախ-ուրախ տարավ Թաքավորի տղին ընծա: Ուրախությունից ձիանքը անգամ չջրեց: Թաքավորի տղեն մնաց միտք անելով, թե բաշմակը ո՞ւմը կարող է լինել: Ուզեց, որ անպատճառ գտնի նրտ տերը: Այսքանն էր իմանում, որ այս աղջկա քոչ է: Ամեն տեղ, նա յուր ծառաներին, նազիր-վեզիրը առած սկսեց ման գալ, բոլոր աղջկերանց ոտները մտիկ անել, բայց ոչ ոքի ոտին չեկավ: Այս համբավը հասավ և այս քաղաքի բնակիչներին, ուր այս աղջիկն էր կենում յուր խորթ

մորուսի Ամենքո լվանում. հաղորում էին իրանց ոտները, որ հագնեն-
այն ռաշմակր:

Խորթ մայրո ևս յուր աղջկանն էր լվանում, իսկ այն խեղճ
աղջկա վրա ուշադրութուն դարձնող չկար: Թաքավորի տղեն յուր
նաղիր-վեղիրներով եկավ այս քաղաքը: Բոլոր աղջկերանց ոտները
փորձև, ևկավ այս խորթ մոր տունն ևս: Նա իսկույն այն խեղճ
աղջկանը քթոցի տակ ծածկեց ու գուպա տվեց, որ մանի, սաս-
տկով, որ այդտեղից դուրս չդա: Աղջկան առաջ քշեց, հագցրին
նորան ռաշմակր, ռայց չեղավ նորա ոտին. թաքավորի վեգիրը
նստած էր այն քթոցի վրա, որի տակ ծածկած էր այն որը աղջիկը
ու դուրսու էր մանում: Նա քթոցի ծակերից գուպալի մլով ծակեց
վեղիրի ոտը: Նա աստեղ ինչ մարդ է ծածկվել ու հրա-
մայեց հանկու քթոցը հետ քցեցին ու տեսան մի սիրուն աղջիկ,
ռայց շատ վատ հագցրած: Թաքավորի տղեն սրա վերալից մի
րան դուշակեց: Ուղում էր փորձել նրա ոտին, նա-ասաց, թե հար-
կավոր չէ փորձել, այդ յուրն է. ավելացնելով, թե հաստատելու
համար կարող է սրա մի թայր ևս բերել ու գնաց իսկույն ժվժվաց-
րեց, հրեղեն ձին դուրս եկավ. աղջիկը հագնվեց սիրունիկ ու մի
թայր ռաշմակի ևս հագին, մի ոտը առանց ռաշմակի, եկավ կանգ-
նեց թաքավորի տղի առջև: Նա իսկույն գրկեց նրան ու ասաց, թե
նա իրենն է, ինրը նրանը, ռաշմակի մի թայր ևս տվեց հագնի ու
տարավ յուր պալատը ու մեծ հարսանքով պսակվեց նրա վրա:
Խորթ մայրը շիտու պատուում էր:

Մի օր սա դնաց յուր աղջկանը՝ թաքավորի տղի կնկանը տես-
նելու. այդ ժամանակ թաքավորը ինքը տանը չէր, նրա տղեն էր
տանը միայն: Նա հարցրեց աղջկա հալը ու հետո ասեց, որ տանի
ծովում լողացնի. ծովը հենց թաքավորի պալատի առջևն էր: Թա-
քավորի տղեն տվեց, որ տանի լողացնի: Խորթ մայրը լողացնելիս
բռնեց ու դեցեց ծովը: Մովում նա մի ոսկի ձուկ դառավ: Իսկ սրա
փոխանակ յուր աղջկանը տարավ թաքավորի պալատը: Թաքավորն
ու նրա տղեն մտիկ էին անում, որ սա ուրիշ աղջիկ էր, բայց չէին
կարողանում բան ասել, վախենում էին իրանց անունից: Էն աղ-
ջիկը, որ ոսկե ձուկ էր դառել, ծովի միջից վեր էր թռչում միշտ
դուրս ու էլի ընկնում մեջը:

Թաքավորը, որ իմաստուն էր, հասկացավ թե բանը ընչումն է.
իր տղին կանչեց ու ցույց տվեց այն ոսկե ձկանը, ասելով, որ նա

է յուր առաջվա կիներ և թե այն պառավ է, որ գցել է ծովը: Այս խոսակցութիւնը լսեց այն խորթ մոր աղջիկը ու սուտ հիվանդացավ:

Աշխարհում ինչքան բժիշկ բերին, նրան չկարացին լավացնել: Վերջը ինքը ասեց, որ նա չի լավանա մինչև էն ոսկե ձուկը, որ միշտ վեր է թռչում, չբռնեն ու չբիեն իր հմար, նա ուտի: Թաքավորը հրամայեց, որ բռնեն այն ոսկե ձուկը ու իրեն տան նրան: Նա կերավ սաղ ձուկը ու աշխատում էր, որ իսկի փուշ էլ չմնա, սուփրի վրա, այնպես որ փշով կերավ, պրծավ, բայց փշի մի կտոր սուփրի տակ մնացել էր ու նա շէր նկատել: Երբ տարավ ծառան սուփրեն թափ տվեց դուրսը, այն փշի կտորը գետնի վրա ընկնելով, մյուս օրը մի ահագին խնձորի ծառ դուրս եկավ Թաքավորի պալատի բակի մեջ, որի վրա երեք հատ շատ կարմիր խնձոր կային: Թաքավորն իսկույն իմացավ, որ սա այն աղջիկն է ու ցույց տվեց յուր տղին: Այս բանը լսեց դարձյալ նա ու էլի ասեց, որ տկար է և եթե չուտի այն երեք խնձորը ու այն ծառը բոլորովին չկտրեն ու այրեն փայտը, նա չի սաղանա: Թաքավորը հրամայեց կտրել ծառը, իսկ երեք խնձորը տալ նրան ուտելու: Ծառը երբ մանր-մանր կարտում էին որ այրեն, մի կտոր այս ծառի փայտից հեռու ընկավ ու նրանք չնկատեցին: Մի պառավ կնիկ ամեն օր գալիս էր ու Թաքավորի տանը փետից, բանից ժողովում ու նրանով կառավարվում: Թաքավորի շներին հաց տալիս՝ ինչ ավելանում էր, նրան էին տալիս: Այս անգամ էլ եկավ ու փայտ ժողովելիս, նկատեց այդ փայտի կտորը, տեսավ շատ սիրուն փայտ է, վեր կայավ ու խոստացավ չվառել նրան, ու իրա տանը պահում էր: Այս պառավը քանի գնում էր դուրս ու դալի, սրանից դենը տեսնում էր, որ յուր տունը թամուզ-խտակ ավլած է, ամեն բանը յուր տեղը դրած: Նա զարմանում էր. թե այս ո՞վ պիտի լինի տուն մաքրողը:

Մի օր ևս դրսևից ծածուկ նայեց և տեսավ, որ այն յուր սիրուն փայտի կտորի միջից մի ոսկե մաղբրով հրեշտակի նման աղջիկ դուրս եկավ ու սկսեց տունը ավելի: Նա դուռը բաց արեց և նրան խտտեց: Աղջիկը ուզում էր, որ էլի հետ մտնի յուր փայտի բնի մեջ, միայն պառավը շթողեց: Նա պառավին մի բուռը փող տվեց, նա գնաց նրա հմար լավ շորեր առավ, բերեց նրան հագցրեց: Հետո ասեց պառավին, որ գնա Թաքավորին ու նրա տղին ասի, թե իրա տանը մի աղջիկ է եկել, կանչում է իրանց մոտ ղոնաղ:

Պառավը առաջ վախենում էր, բայց նա ստիպելով վերջապես
կարողացավ ուղարկել թաքավորի պալատը: Պառավը գնաց ու
թաքավորին հայտնեց, որ այսպիսի մի աղջիկ յուր մոտ հյուր է
եկել, խնդրում է, որ իրանք ևս գան յուր տունը:

Թաքավորը, որ իմաստուն էր՝ հասկացավ բանի էությունը ու
իր աղեն առած դնաց: Աղջիկը նրանց բարև տվեց, իրար հետ հաց
կերան ու հացի ժամանակ թաքավորը խոսք գցեց նրա վրա, հար-
ցրենելով թե նա այն աղջիկը չի՞: Նա ասաց, որ այո՛, ինքը այն
աղջիկն է, ու պատմեց յուր գլխով բոլոր անցածը: Հետո թաքա-
վորն ու տղեն փաթաթվեցին նրա նտովը, ուրախությունից շփ-
տեին ինչ անեն: Աղջիկը յուր մաղից մի հատ կտրեց տվեց, որ
տանեն յուր ձիու աչքի առջև բռնեն. նա ինքը կգա: Նրա մազը
տարան ձիու աչքի առջև պահելուն պես, գժի նման իսկույն վազ
տվեց դա՛ւ յուր տերը: Նա դիտեր ու ընկնում էր յուր տիրոջ ոտ-
ները, լիզում նրա կրեսը: Նա նստեց յուր ձիու վերա ու պառավին
մեծ փող տալով, դնաց յուր պալատը:

Այդ խորթ մոր աղջկանը կապեցին դաթրի պոչից ու բաց թո-
զին, որ տանի սարով, քարով տա, մեծ թիթեն ականջը հետ բերի:
Իսկ այս աղջկա հետ կրկին թաքավորի տղեն ապրեց, ինչպես յուր
կինը:

Ճշմարտությունը էսպեսով աշխարհումս իսկի չի կորչում:

